Կ-1291[2]-24.03.2026-ՊԱ-011/0 ԼՐԱՄՇԱԿՎԱԾ **ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«12.1) *Արտաքին հետախուզության ծառայությունում պաշտոն զբաղեցրած անձը*՝

ա. որը պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 տարվա ծառայության ստաժ, կամ

բ. որի ծառայությունը դադարեցվել է դատական կարգով անգործունակ ճանաչվելու կամ «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված հիմքով:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 10-11-րդ մասերում «9-12.1-ին կետերում նշված մասնագիտական» բառերից հետո լրացնել «և ծառայության» բառը, իսկ 10-րդ մասի փակագծերում նշված «մասնագիտական» բառից հետո լրացնել «և ծառայության»:

Հոդված 3. Օրենքի ~~Ն~~ 1-ին հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ կետով.

«6. Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայության ծառայողի պաշտոն»:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: